



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 8 ԱՊՐԻԼ, 2019

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈՐԹ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, րուր ինձ իմաստութիւն պարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 103

ԱՍՏՈՒՇՈՅ ՍԷՐԸ

Օրհնարանէ Տէրը, ով իմ անձս,
եւ մի՛ մոռնար անոր բոլոր պարգեւները:
Ան է որ կը փաւէ բոլոր մեղքերդ,
կը բժշկէ բոլոր հիւանդութիւններդ:
Ան է որ կեանքդ կը փրկէ կորուստէն,
եւ իր սիրովն ու գթութեամբը կը պարուրէ քեզ:
Ան է որ բարիքներով կը լեցնէ քու կեանքդ,
այնպէս՝ որ միշտ երիտասարդ մնաս, արծիւներուն պէս:
Ինչպէս հայր մը կը գուրգուրայ իր զաւակներուն վրայ,
այնպէս Տէրը կը գուրգուրայ իրմէ ակնածողներուն վրայ,
որովհետեւ ինք լաւ գիտէ մեր կազմուածքը,
եւ չի մոռնար որ հողեղէն ենք:

ՇԱՐԱԿԱՆ-ԱՂՈՐԹ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Ամենատուր Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:

Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:

Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հոովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

ՕՐՈՒԲԱՆ ՆԻԹՈՐ



ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ԵՐԵՄԻԱՅԻ

3:1-25

ԱՆՀԱԲԱՏԱՐԻՄ ԻՍՐԱՅԷԼ (3:1-5)

Աստուած շարունակելով իր պարզամը Իսրայելին, անոր անհաւարարմութիւնը կը նմանցնէ այր եւ կնոջ անհաւարարմութեան կապին: Կին մը եթէ անհաւարարիմ ըլլայ իր ամուսնոյն, ամուսինը երբեք չի ներեր անոր, բայց հակառակ Իսրայելի անհաւարարմութեան, Տէրը փակաւին առիթ կու տայ ըսելով. «Նորէն ինծի դարձիր» (1 հմր): Տեսէք ինչպիսի սիրոյ ու ողորմութեան արտայայտութիւն, որ Տէրը կը ցուցաբերէ, այս պարագային, Իսրայելի նկարմամբ:

Կրկնութեան գնով Տէրը կը յիշեցնէ Իսրայելի չարութիւնը, ցոյց տալով այն բոլոր փոփոխութիւնները, որպէս պաշտամունքի վայրեր, հոն ուր պոռնկութիւն ըրաւ: Այդ վայրերը, որպէս վկայութիւն: Այս չարութիւնը պարճառ դարձաւ, որ երկիրը պղծուի (2 հմր): Ինչպէս Ադամի պարագային, իր այդ ըրածին համար, երկիրը անհիծեալ եղաւ: Մա կը նշանակէ, որ մարդուս արարքները պարճառ կըլլան երկիրը պղծուելու եւ անհիծուելու, այն ինչ սպեղծագործութեան ժամանակ Տէրը ամէն ինչ բարի սպեղծեց:

Ահա չարութեան պարճառով, օրհնութիւնն ալ դադարեցաւ. «**Անձրեւները խափանուեցան, եւ վերջին անձրեւը չեկաւ**» (3 հմր): Այս բոլորը փոխանակ առիթ ըլլալու զոչումի, ընդհակառակը, «**Անօթը մէկդի ձգեց, եւ կրցածին չափ չարութիւն գործեց**» (3-5 հմր): Փոխանակ զԱստուած իբրեւ Հայր ճանցնալու, առաւել եւս հեռացաւ Աստուծմէ:

ԻՍՐԱՅԷԼ ԵՒ ՅՈՒՐԱՅ ՊԷՏՔ Է ԶՂՋԱՆ (3:6-18)

Հերարքորական մրածելակերպ եւ հոգեբանութիւն ունի մարդ արարածը: Յաճախ երբ դէպքեր կը պարահին մարդոց շար նկարի չենք առնէր, թէ այդ դէպքերը նաեւ մեզի բան մը ունին փոխանցելիք: Պօղոս Առաքեալ կ'ըսէ. «*Անցեալին պարահաճ դէպքերը իբրեւ օրինակ վերցուցէք, այսօր ձեզիք*» (Ա Կո ը ն թ 10): Ահա նոյնը կը պարահի նաեւ Յուդային: Փոխանակ սորվելու Իսրայելի սխալէն, ընդհակառակը, ինք այդ նոյն սխալը կ'ընդօրինակէ: Հակառակ այն իրողութեան, որ Տէրը առիթ փութաւ դարձի: Բայց անիկա ամբողջ սրտով չդարձաւ, հապա սրտութեամբ, որ կը նշանակէ, անոր դարձը կեղծ էր (6-10 հմր): Ահա Տէրը Երեմիա մարգարէն կը դրկէ, որպէսզի Տիրոջ պարզամը փոխանցէ ըսելով. «**Դարձիր, ով ապստամբ Իսրայել, իմ բարկութիւնս ձեր վրայ չեմ թափեր, որովհետեւ ողորմած եմ ու յաւիտեան ոյս չեմ պահեր: Միայն թէ քու ունայնութիւնդ ճանչցիր, որ քու Տէր Աստուծոյդ դէմ ապստամբեցար, քու ճամբաներդ օտարներուն փարածեցիր, եւ իմ խօսքիս հնազանդութիւն չըրիր**» (12-13 հմր): Կը շարունակէ Տէրը ըսելով. «**Թէն ձեզ մերժեցի, բայց ձեզ պիտի առնեմ մէկ քաղաքէ մէկ հողի, մէկ ազգապոռնիմ երկու հողի, ու ձեզ Միօն պիտի բերեմ**» (14 հմր): Արտայայտութիւն մը, որ ըսել կ'ուզէ, քիչեր են, որոնք պիտի դարձի գան: Տակաւին, անոնց պիտի փայ այնպիսի հովիւներ, որոնք Աստուծոյ կամքին համաձայն պիտի գործեն, ոչ նախկիններուն պէս (15 հմր):

Երբ անոնք սկսին աճիլ ու շարնալ, «անգամ մըն ալ Տիրոջը ուխտին փապանակը պիտի չըսեն», արտայայտութիւն մը, որ կը յիշեցնէ Հին Կտակարանի դրուածքը: Այն արեւն Երուսաղէմը Տիրոջ արթոր պիտի անուանեն, եւ բոլոր ազգերը Երուսաղէմ պիտի հաւարուին, եւ անգամ մըն ալ իրենց չար սրտին կամակորոտութեան երեւէն պիտի չերթան (17 հմր): Այն օրերուն Յուդայի փունը, Իսրայելի փունը եւ հիւսիսի երկրէն անոնց հայրերուն փութմը երկիրս պիտի գան: Մէկ այլ ուրիշ արտայայտութիւն յաւիտեանական կեանքի ժառանգութեան (18 հմր):

ԱՍՏՈՒԾՈՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԿՈՒՊՊԱՇՏՈՒԹԻՒՆԸ (3:19-25)

Այդ երկրի ժառանգութեան նախապայմանը հետեւեալն է. «**Ինծի Հայր պիտի աղաղակես, եւ ինծի հետեւելէ պիտի չդառնաս**» (19 հմր):

Անգամ մը եւս յիշեցնելէ յետոյ անոնց ապստամբութիւնը, Տէրը դարձեալ հրաւեր կոչ կ'ուղղէ ըսելով. «**Դարձէք, եւ ձեր ապստամբութիւնները պիտի բժշկեմ**» (22 հմր): Ահա այս հրաւեր կոչին դիմաց, ուրիշ բան պէտք չէ, եթէ ոչ միայն խոստովանութիւն, ըսելով. «**Ահա մենք քեզի կու գանք, որովհետեւ դուն ես մեր Տէր Աստուածը: Բլուրներու եւ լեռներու յուսալը պարապ բան է: Իսրայելի փրկութիւնը Տէր Աստուծմէն է: Թէ՛ մենք եւ թէ՛ մեր հայրերը մեր Տէր Աստուծոյն դէմ մեղք գործեցինք եւ Անոր ձայնին հնազանդութիւն չըրինք**» (23-25 հմր):